

### Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն թիվ 3

2013թ. մարտի 22-ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի

#### *Օրակարգ.*

1. Պետական քննությունների, ավարտական աշխատանքների, թեզերի կազմակերպման աշխատանքների ընթացքը ֆակուլտետում:  
/Չեկ. դեկանի տեղակալ Վ.Վարդանյան/
2. Ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում:  
/Չեկ. դեկանի տեղակալ Ա.Գրիգորյան/
3. Ատենախոսական թեզերի քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ** – Դեկանի տեղակալ Վ.Վարդանյանի հաղորդումը ֆակուլտետում պետական քննությունների, ավարտական աշխատանքների, թեզերի կազմակերպման աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Չեկուցողը նշեց, որ բոլոր ամբիոնների գծով ավարտական բաժանված են ուսանողներին, նշանակված են ղեկավարներ, բացառությամբ սոցիալ-տնտեսական աշխարհագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնների գծով կան 4 ուսանողներ, որոնք դեռ չեն ներկայացրել թեմաներ՝ ընտրելու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1) Ընդունել ի գիտություն Վ.Վարդանյանի հաղորդումը:

2) Հանձնարարել ամբիոնի վարիչներին՝ հանդիպել ուսանողներին, որպեսզի նրանք վերցնեն իրենց թեմաները և հասցնեն ժամանակին պաշտպանել իրենց ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը:

3) Ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը ամբիոններում պետք է անցնեն մախնական պաշտպանություն:

2. **ԼՍԵՑԻՆ** – Դեկանի տեղակալ Ա.Գրիգորյանի հաղորդումը ֆակուլտետում ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքի վերաբերյալ: Չեկուցողը հանգամանորեն կանգ առավ ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման հարցի վրա, նշեց, որ այդ պրակտիկաների գրաֆիկները պահպանվում են մասն այս տարի: Կրճատվել են միայն մի քանի երկրաբանական երթուղիներ՝ ամբիոնի վարիչների տեղեկատվությամբ:  
*Ելույթ ունեցան՝ Ռ.Մովսեսյանը, Թ.Վարդանյանը, Ա.Ավագյանը, Ս.Հայրոյանը:*

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1) Ընդունել ի գիտություն Ա.Գրիգորյանի հաղորդումը ֆակուլտետում ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքի վերաբերյալ:

2) Հանձնարարել ամբիոնի վարիչներին, որպեսզի արտադրական պրակտիկաները կազմակերպվեն անհրաժեշտ մակարդակով:

3. **ԼՍԵՑԻՆ** – Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ֆարազե Ռաջախեի «Կենտրոնական Իրանի հրաբխանստվածքային և նստվածքային ապարների երկրաքիմիական և շերտագրական առանձնահատկությունների ուսումնասիրում» թեմայով ատենախոսության գիտական հաղորդումը:

*Ելույթ ունեցան* - Ա.Գրիգորյանը, նշելով, որ աշխատանքը լավ ուսումնասիրության արդյունք է, միայն եզրակացությունը պետք է կրճատել ու ենթարկել խմբագրման և երաշխավորում է աշխատանքը պաշտպանության:

*Ելույթ ունեցան* մասն Ա.Աղինյանը, Մ.Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ֆարազե Ռաջախեի «Կենտրոնական Իրանի հրաբխանստվածքային և նստվածքային ապարների երկրա-

քիմիական և շերտագրական առանձնահատկությունների ուսումնասիրում» թեմայով ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Ձրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Ս.Հայրոյանի՝ «Ուռչող գրունտների ամրության և սողքի փոփոխության օրինաչափություններն ու կանխատեսումը, նրա կիրառման հնարավորությունները շինարարության մեջ (փորձարարահաշվարկային հետազոտություններ)» վերնագրով դոկտորական ատենախոսության քննարկումը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ձրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Ս.Հայրոյանի՝ «Ուռչող գրունտների ամրության և սողքի փոփոխության օրինաչափություններն ու կանխատեսումը, նրա կիրառման հնարավորությունները շինարարության մեջ (փորձարարահաշվարկային հետազոտություններ)» վերնագրով դոկտորական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության:

#### 4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

**ԼՍԵՑԻՆ** – Երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Վ.Պ.Վարդանյանի «Էլեկտրահետախուզություն» (հաստատուն հոսանքի մեթոդներ) դասագրքի տպագրության երաշխավորելու հարցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Վ.Պ.Վարդանյանի «Էլեկտրահետախուզություն» (հաստատուն հոսանքի մեթոդներ) դասագիրքը երաշխավորել տպագրության:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Ս.ՍԱՐԴԱՐՅԱՆ